№ 25 ԱՊՐԻԼԻ 14 (26) 1877 ԱՊՐԻԼԻ 14 (26) № 25

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 7 բուբլ, կէս տարվանը 4 բուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція „Мшакъ"*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջապէս։—Ներքին տեսութիւն։ Քահանաների վիճակը։ Նամակ Շամախուց։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Վերջին քաղաքական լուրերը։ Ներսէս պատրիարգի հրաժարականը։ Կ. Պօլսի նկարագիրը։ Նամակ Գերմանիայից։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Մատենագրութիւն։

«Кавказъ» լրագրի հետ տարածվեցաւ հետեւեալ աւելվածը՝ «Այսօր, ապրիլի 12-ին ստորագրված է ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻՑ Կիշինեվի մէջ Բարձրագոյն ՄԱՆԻՖԵՍՏ, որ յայտնում է պատերազմ Թիւրքիային,—և մեր զօրքերին, որոնք հաւաքված են սահմանների վրա հրամայած է անցնել Թիւրքաց պետութեան սահմաններից։

## ՎԵՐՋԱՊԷՍ

Ինչպէս լսում ենք մեր թեմական առաջնորդը քանի մի ժամանակ է զբաղված է մեր քահանաների նիւթական ապահովութեան խնդրով։

Հինգ տարի շարունակ մեր կրկնած միտքը նոր է սկսում ուրեմն օրական հարց դառնալ մեր հոգևորականութեան շրջանում։ Մեր հոգևորականութիւնը հասկացաւ վերջապէս որ առանց նիւթական հաստատ ապահովութեան, քահանան միշտ կը մնայ մուրացկան, երբէք չի ունենայ ժողովրդի վրա այն բարոյական հաստատ ներգործութիւն, երբէք չի ունենայ ամբոխի աչքում այն բարոյական հեղինակութիւն, ինչ որ կարող էր ունենալ, եթէ ապահովված լիներ հաստատ ռոճիկով, ինչպէս ժողովրդական պաշտօնեայ։

Մենք կրկնում ենք՝ քահանան ժողովրդական պաշտօնեայ է, ուրեմն նրա նիւթական դրութիւնը պէտք է որոշ լինի....

Երկուսից մինը՝ կամ պէտք է թողնել քահանաներին նոյն դրութեան մէջ, կամ եթէ կամենում է՛ք վերանորոգել նրանց նիւթական վիճակը, պէտք է հիմքից վերանորոգէ՛ք նրանց դրութիւնը, և ոչ թէ բաւականանաք զանազան անորոշ, անցաւոր, հաշտեցնող միջոցներով, ինչպէս օրինակ գանձանակի հաւասարապէս բաժանելը, կամ քահանաների մէջ ծուխերի հաւասարապէս դասաւորելը, և այլն....

Մի՞ակ միջոցը հարցին մի որոշ լուծում տալ, այն կը լիներ որ նախ և առաջ ամեն եկեղեցում պակասեցնէ՛ինք քահանաների թիւը դիցուք մինչև երկու հոգի, և եկեղեցուն պատկանած ծուխից նշանակէ՛ինք որոշ ռոճիկ երկուսին էլ հաւասարապէս, որոնք հերթով կը կատարէին իրանց քահանայական պաշտօնը։

Ռոճիկը կը կազմվէր ծուխին պատկանած իւրաքանչիւր անդամի կողմից իր կարողութեանը համեմատ տրվող որոշ տարեկան տուրքից, որ կը դոյացնէր մի յայտնի գումար։ Այդ գումարը կը յանձնվէր երեցփոխանին և կը կառավարվէր ժողովրդից ընտրված հոգաբարձուների վերահսկողութեամբ, որոնց ձեռքում կը լինէր թէ եկեղեցական, թէ եկեղեցուն պատկանած երկսեռ ծխական դպրոցի գումարների կառավարութիւնը։

Ի հարկէ ժողովրդից կախված կը լինէր իր հովիւի ընտրելը, և ժամանակով քահանան կընտրվէր ուսում առած, լուսաւորված երիտասարդներից, որի պաշտօնը կը լինէր ոչ թէ միայն պատարագանելը, այլ հարկաւոր կը լինէր ընտրել այնպիսի անձինք, որոնք այնքան զարգացած լինէին, որ կարողանային քարոզ ասել ժողովրդին, և մի և նոյն ժամանակ կարողանային հսկել ուսումնարանի վրա և նրան ուղղութիւն տալ....

Ի հարկէ հաստատ ռոճիկ նշանակելը մեր այժմեան տգէտ, անուս, կօպիտ, ռամիկ քահանաներին չաժէ, այն մեր հովիւներին, որոնք աւելի տգէտ են, քան թէ իրանց հովված հօտը,—բայց ինչ արած, առ ժամանակ մինչև որ նրանք կենդանի են, պէտք է համբերել նրանց, պէտք է պահել նրանցից գոնէ մի քանիսներին, մինչև որ նոր, ճշմարիտ զարգացած, աւելի թարմ կենտիգենտը փոքր առ փոքր դրանց տեղը կը բռնի։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Փառք Աստուծու որ դէթ առաջնորդը և քահանայքը պարապած են, որպէս հաղորդում են Թիֆլիսի լրագիրները «քահանայից վիճակը փոփոխութեան և նոցա նիւթապէս հաւասար ապահովութեան» խնդրով։ Առաջնորդի մարտի 8-ին արած առաջարկութեան համակրելի պրինցիպը, որ «բոլոր արդիւնքները իւրաքանչիւր եկեղեցու միաբանք միասին ժողովին և ապա բաժանեն հաւասարապէս իւրեանց մէջ» ոչինչ կապ չունէ նոյն առաջարկութեան յետագայ խօսքերի հետ— «իւրաքանչիւր քահանայ ոլքան տուն ծուխ ունէ, թող էլի հովէ», որոնց անբաւարարութիւնը ինքն ըստ ինքեան պարզ է։ Բայց ինչ արգելք կայ քահանաներին հաւասար մեծութիւն ծուխեր տալ. հանել նորան, որ ամենայն ծուխ մի և նոյն թւով տներից բաղկացած լինի այնու ամենայնիւ առաւել դիւրին է, քան թէ սորա հետ կցել և այն անիրագործելի առաջարկութիւնը, որ ամեն մի ծուխ ունենայ նոյն թւով հարուստ, նոյն թւով միջին կարողութեան, և նոյն թւով չքաւոր տներ, որով ծխերն իբր թէ կը հաւասարվեն և շահաւետութեան կոչմանէ։ Նախ՝ Աստուած գիտէ ով ինչ կարողութեան

---

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայրենի լեզու, դասագիրք ընթերցանութեան ազգային ուսումնարանների համար։ Յարմարեցրած աշակերտների աստիճանաբար զարգացմանը և դիտողաբար բնութեան երևոյթներին և պատմական պատկերներին ծանօթանալուն։ Գ. և Դ. տարի. Թիֆլիս. 1877 թ. Աշխատասիրութիւն Նիկ. Տէր-Ղևոնդեանի. տպարան Մարիրոսեանի։

—

(Շարունակութիւն)

Աշխատենք այժմ համառօտապէս առաջ բերել յիշեալ վարժութիւնների բովանդակութիւնները։ Առաջին վարժութեան մէջ աշխատասիրողը ծանօթացնում է մանուկներին, շատ յաջողակ կերպով, իրանց մարմնի և նորա մէջ պատահող այլ և այլ գործողութիւնների հետ—տեսանելիքի, լսելիքի, հոտոտելիքի, շոշափելիքի և ճաշակելիքի և նորանց գործողութիւնների հետ. սնունդառութեան, մարսողութեան, արեան շրջանադարձութեան և շնչառութեան համառօտ պատմութիւնն է անում բոլորովին գործնական և առաւելապէս հետաքրքրական եղանակով, որը զարթեցնում է մանուկի ըմբռնողութեան մէջ խորին ուշադրութիւն և յիշողութիւն։ Պատմում է թէ ինչպէս աստիճանաբար զարգանում է մանուկը և ինչպէս զարգանում են նորա ֆիզիքական և հոգեկան ընդունակութիւնները։ Ծանօթացնում է համառօտ կերպով ոսկրակազմի, նեարդային կարգաւորութեան, մկնամսերի հետ և այլն։ Մի և նոյն վարժութեան մէջ համառօտ կերպով ծանօթութիւն է տալիս կապիկների և նորանց կենցաղավարութեան մասին։ Այնուհետև խօսում է տարուայ չորս եղանակների վերա առանձին առանձին և պատշաճաւոր ընդարձակութեամբ։

Երկրորդ վարժութեան մէջ պ. Տէր-Ղևոնդեանը խօսում է կաթնասուն կենդանիների գլխաւոր ներկայացուցիչների վրա, համառօտապէս պատմելով նրանց առանձնութիւնները, նորանց տուած օգուտն ու վնասը։ Կաթնասուն կենդանիներից նոքա, որոնք արդէն ծանօթ են աշակերտներին որքան և իցէ, նա համառօտ է անցնում, իսկ անծանօթների մասին պատմում է աւելի ընդարձակօրէն։ Նկարագրում է թէ ինչպէս են որս անում գազանները, ինչպէս է ինքն մարդը որսում գազաններին։ Խօսում է կաթնասունների ոսկրակազմի, թռչող գազանների (չղջիկներ) և ջրային գազանների մասին, յետոյ թէ ինչպէս և ինչի է մարդս որսում ծովային գազաններ։

Երրորդ վարժութեան մէջ խօսելով թռչունների վերա, նկարագրում է թռչունները, առաւելապէս նրանց գլխաւոր տեսակները—անային, ջրային, ճահճային, մագլցող, երգող, գիշատող, գիշերային յապշտակող և այլ թռչուններ,—թռչունների խելքը, սովորութիւնները, կենցաղավարութիւնները։ Այս մի և նոյն վարժութեան մէջ ընդարձակ կերպով խօսվում է սողունների (երկակենցաղների) և շատ համառօտ կերպով ձկների վերա, բաւականանալով միայն գեղարքունու նկարագրութեամբ։ Այնուհետև բաւական ընդարձակօրէն անցնում է ողնաւոր կենդանիների նկարագրութեանը, որոնց պարոն աշխատասիրողը անուանում է ստորակարգ կենդանիներ, որպիսիք են միջատները, խեցեմորթները, սարդերը, որդերը և այլն։ Օգտակար միջատներից մի քանիսը (մեղուն, չերամը) նկարագրվում են առանձին առանձին։

Չորրորդ վարժութիւնը սկսվում է դաշտի նկարագրութեամբ։ Այդտեղ նկարագրվում է դաշտային հարստութիւնը և ապա անցնում է դէպի անտառը։ Նկարագրում է նորա օգուտը, բերում է շատ գեղեցիկ օրինակներ թէ ինչպէս անտառի հետ անխոհեմ վարուելը վնասում է երկրի պտղաբերութեանը և կլիմայի վատանալու պատճառ է դառնում։ Ցիչեցնում է Արարատեան նահանգի անցեալ ճոխութիւնը, ակնարկելով Ղազար Փարպեցու նկարագրութեան մասին, և Արաքսի յորդութիւնը անցեալում և ներկայումս։ Այնուհետև բաւական ընդարձակ խօսում է բոյսերի և նոցա բեղմնաւորութեան մասին և տալիս է համառօտ բուսաբանութեան կուրս մեր ազգային ուսումնարաններին, որոնց մէջ մինչև այժմ այդ մասին տարրական տեղեկութիւն չէր աւանդվում, և այդ մասը վերջացնում է օգտակար բոյսերի և վնասակարների վրա խօսելով։ Չորրորդ վարժութեան երկրորդ կէսը նուիրում է հանքաբանական նիւթերին։ Այդտեղ խօսվում է հողի, նորա զանազան տեսակների, դրանց յատկութիւնների, քարերի, մետաղների, աղի, այրուող հանքերի—քարածուխի, ծծմբի վերա, պարզում է դոցա օգուտը և գործածութիւնը։ Առհասարակ այս և հետևեալ վարժութիւնները բոլորովին նոր և կարևոր պաշար են առաջարկում մեր ծխական ուսումնարաններին։

Հինգերորդ վարժութիւնը խօսում է ֆիզիքական գլխաւոր երևոյթների վրա, բաւական ընդարձակօրէն նկարագրում է օդը և նորա յատկութիւնները, ջերմութիւնը և ցրտութիւնը, մարմինների փոփոխութիւնը ջերմութիւնից, քամին, ջերմաչափը, ջուրը և նորա այլ և այլ ձևակերպութիւնները—ցող, եղեամն, անձրև, ձիւն, կարկուտ։ Մագնիսը և կողմնացոյցի գիւտը։ Այդ վարժութիւնը վերջանում է էլէքտրականութեան և մագնիսականութեան ընդարձակ և շատ յաջողակ բացատրութեամբ։

Վեցերորդ վարժութիւնը բովանդակում է իւր մէջ աշխարհագրական յօդուածներ։ Առաջին յօդուածի մէջ, ջուր և ցամաք անունով, որոշվում է աշխարհագրական տերմիններ, այնուհետև պատմվում է թէ ինչպէս են վեր առնում մի տեղի մակարդակը, թէ ինչպէս են առարկաները փոքրանում իրանց հեռաւորութեան համեմատ և ծանօթութիւն է դրվում երկնային մարմիններից մի քանիսների մասին։ Այստեղ խօսվում է մեր երկրի կոլորութեան վերա, երկրագնտի երկու կիսագնտերի, նոցա մայր ցամաքների և ջրերի հետ։ Այնուհետև այդ մասը կենդրոնացնում է իւր ուշադրութիւնը միջերկրական ծովի շրջակայքում բնակվող հին ազգերի վերա, ծանօթացնում է աշակերտներին Ֆինիկացւոց, Կարթագէնացւոց, Յունաց, Հռոմայեցոց, Պարսից, Եգիպտացոց և Հայոց հետ։ Պատմում է՝ թէ ինչպէս այդ ազգերը հաղորդակցութիւն ունէին միմեանց հետ, և այսպիսով, մի կողմից ծանօթացնում է մանուկներին այն ազգերի հետ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՎԱՌՆԵՐԸ

Ամերիկա

Ամերիկայի Միացեալ Նահանգներ մեր նամակագրի գրելով՝ Հոկտեմբերի 10-ին Վաշինգտոնում տեղի ունեցավ Հանրապետական կուսակցության ազգային գագաթաժողովը, որի մասնակցեցին 38 նահանգների ներկայացուցիչներ։ Ընտրվեցին նոր նախագահ, փոխնախագահ, գանձապետ, գրագիր։ Ընտրվեցին նաև 15 հոգուց բաղկացած գործադիր մարմին։ Ընտրվեցին նաև 38 հոգուց բաղկացած ազգային կոմիտեի անդամներ։ Ընտրվեցին նաև 38 հոգուց բաղկացած ֆինանսական կոմիտեի անդամներ։ Ընտրվեցին նաև 38 հոգուց բաղկացած գրագրական կոմիտեի անդամներ։ Ընտրվեցին նաև 38 հոգուց բաղկացած ընտրական կոմիտեի անդամներ։ Ընտրվեցին նաև 38 հոգուց բաղկացած գանձապետ

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՎԵՐՋԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐԸ

—

Հեռագիրներից երևում է որ Ռումինիայի իշխանը հրամայեց պատերազմական ոգի վրա կանգնեցնել իր զօրքերը։—Լոնդոնի պարլամենտում արտաքին գործերի մինիստրի օգնական Բօրկ յայտնեց որ Ռումինիայի իշխանութեան չէզոք լինելը ապահոված չէ ոչ մի արկատով և որ Ռումինիան պէտք է համարվի Թիւրքիայի պետութեան անբաժանելի մի մաս։—Հեռագիրը հաղորդում է որ այս օրերս հասաւ Կ. Պոլիս անգլիական ներկայացուցիչ սիր Լայարդ, որի պաշտօնը կը լինի, Կ. Պոլսի մէջ մնալով, հետևել ուշադրութեամբ պատերազմական ընթացքին, և հարկաւոր ժամանակ առաջարկել Անգլիայի հաշտեցնող միջամտութիւնը։—Լրագիրներից երևում է որ Թիւրքաց պարլամենտում ընդամենը 10 հայ կայ, այն ինչ յոյները որոնք Թիւրքիայում այնքան բազմաթիւ չեն, որքան հայերը, ունեն պարլամենտում 14 ներկայացուցիչ։—Լրագիրներից երևում է որ Կ. Պոլսի հայոց և յունաց լրագրութեան մէջ ծագել է սաստիկ բանակռուութիւն։ Յունաց տարրը կամենում է միանալով Թիւրքաց տարրի հետ, ճնշել հայերին պետական ներքին կեանքի խնդիրների վերաբերութեամբ։ Յոյները կարծում են որ կարող են տիրապետող ազգ լինել, նոքա երևի դեռ չեն հանել իրանց գլխից Բիւզանդեան կայսրութեան ցնորքը։

---

### ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

—

Ս. Պատրիարք Հօր հրաժարիլն ծանուցինք անցեալ շաբաթ օր։ Ի վերջոյ իմացանք, թէ նորին սրբազնութիւնը հրաժարագիր մատուցեր է նաև Բ. Դրան։ Սակայն հարկադրեր է ետ առնուլ հրաժարականը՝ շնորհիւ մեծ Եպարքոս բարձրապատիւ Էտհէմ փաշայի, որ՝ լսելով թէ գաւառական ինչ ինչ կարևորագոյն խնդրոց երկար ժամանակէ հետէ արծարծուած բայց անլոյծ մնացած ըլլալն է հրաժարման բուն պատճառը, անմիջապէս հրամայեր է որ պէտք եղած գործադրութիւններն ըլլան։ Հրամայեր է որ վերստին գումարի Բ. Դուռը յառաջագոյն կարգեալ յանձնաժողովն, որոյ պաշտօնն էր գաւառական հարցատահարութեանց և մասնաւորապէս հողային խնդրոյն քննութիւնը։ Հրամայեր է որ այս յանձնաժողովոյ տեղեկագիրն շուտով առնուի և պէտք եղած տնօրինութիւնն ըլլայ ըստ առաջարկութեան նոյն տեղեկագրոյն։ Հրամայեր է, որ գաւառի մէջ տեղ գտնուած, և նոցա անկումն մինչև ցարդ անկարելի եղած, սակայն իրենց գործերովն ժողովրդեան վնասակար եղող մեկ երկու համբաւաւոր միւսիր ու դայմագամ անմիջապէս պաշտօնէ ձգուին։

Այսպիսի հրամաններէ զատ, նորին բարձրութիւնը միանգամայն խստիւ պատուիրեր է որոց անկ է, որ պատրիարքարանէն Բ. Դրան մատուցեալ և մատուցանելի գրերը այսուհետև անյապաղ նկատողութեան առնուին, և ճշդիւ գործադրուին։

Բարձրապատիւ Էտհէմ փաշայի այս հրամաններն՝ ոչ միայն Ս. Պատրիարք Հօր, այլ և ընդհանուր ազգիս գոհութեան ու ուրախութեան պատճառ կըլլան։ Պարտիմք ազգովին մաղթել, որ նորին բարձրութիւնն անսասան յարատև եպարքոսական բարձր պաշտօնին վրա, և կարող ըլլայ գործադրել տալ իւր աշխարհաշէն հրամաններն ու դիտաւորութիւնները։

(Փունջ)

---

### Կ. ՊՕԼՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

—

Սև Ծովին դեռ չը հասած, Կ. Պօլսի նեղուցը ամեն ճանապարհորդ հեռուից կարողանում է նկատել։ Դա մի տեսակ նաւահանգիստ է որ բոլոր տէրութիւնների շոգենաւերի հանգստութեան տեղն է, ամբողջ Ծովային աշխարհի ընդհանուր ապաստանարանն է։ Աշխարհի այս և այն ծայրից խումբ խումբ նաւերի և շոգենաւերի նեղուց մըտնելը և դուրս ելնելը համոզում է ականատեսին որ Կ. Պօլիս ոչ թէ Թիւրքիայի մայրաքաղաքն է, այլ ամբողջ աշխարհի ընդհանուր ազատ մի նաւահանգիստ քաղաք է։ Մարմարեայ Ծովից Սև Ծովը մտնող նեղուցը ու նեղուցից դէպի Արևմուտք մտնող Ոսկէ պողկոչուած Ծովախորշը այնպիսի մի դիրք է բռնում, այնպիսի մի դիրութիւն է տալիս քաղաքի ճանապարհների հաղորդակցութեանը, որ կարծես բնութիւնը գիտութեամբ ստեղծել է Կ. Պօլիս, որ Եւրոպան Ասիայից այդ բաժանող քաղաքը, պիտի լինի մարդկային լուսաւորութեան կենտրոնը, որ եւրոպական արուեստը, գիտութիւնը և լուսաւորութիւնը պիտի տարածի իւր կից հին ասիական ազգերի վրա։ Ի՞նչ բանաստեղծի է կարօտը այն նեղուցի ափերը նկարագրելու համար, ինչ նկարչի է կարօտ Բօսֆորի ափը իւր կանաչազարդ ծառաստանով նկարելու համար, որ բնութիւնը առատօրէն պարգեւել է այդ ծովափ զառիվայրներին, որի դիմացը կանգնած է Սկիւթարը—ասիական ափը։ Մի կողմից մարդու ձեռքով անկած գեղեցկատեսիլ պարապէները, միւս կողմից բնութիւնից պարգեւած գոյնզգոյն ծաղիկները որ քանի մօտենում ես քաղաքին՝ այնքան աւելի հրապուրվում ես այդ հիանալի տեսարանից։ Մտնելով քաղաքը քո աչքին բացվում է լայնատարած Մարմարեայ Ծովը արևմտահարաւի կողմից որի ափին կանգնած է մեծ Կոնստանդիանոսի պալատը 500 տարից առաջ շինուած, իսկ արևմտեան կողմը Ոսկէ պողծովախորշը որ բաժանում է հին Ստամբուլը նորից և որի վրա շինուած են երկու կամուրջ, մինչև մի վերտա լայնութեամբ իւրաքանչիւրը։ Քաղաքը ծովից այնպէս է երեւում, որ կարծես թէ տները այն բլրների վրա շինած միմեանց վրա թափուած են։ Քաղաքի աշխարհագրական դիրքից, նորա շոգենաւերի, նաւերի անդադար երթևեկութիւնից այնպէս է կարծվում, որ աշխարհի հարստութիւնը այնտեղ է թափուած։ Որչափ գեղեցիկ է քաղաքը իւր արտաքին տեսքով, որի մասին ասում են թէ հազիւ Նէապոլի և Լիսաբոնի հետ կարելի է համեմատել, այնչափ էլ տգեղ է, անճոռնի է իւր ներքին շինութիւններով։ Ուղիղ մի պլանով շինած փողոց և ոչ մինը չը կայ, բոլոր ծուռ և նեղ, այնպէս որ մի թաղից միւս թաղ գնալու համար կառքով դժուար է, այլ միայն ձիով, որ փողոցներում մարդ են ածում։ Ամբողջ քաղաքը շինուած է եօթը բլրի վրա որ քաղաքի հաղորդակցութիւնը շատ դժուարացնում է, ուր մնաց որ կառավարութիւնը բոլորովին անհոգ է թողած գրանց հարթացնելու համար։ Փողոցների մշտական ցեխը, այն զզուելի շները որ անթիւ և անհամար այս կողմը և այն կողմը թափուած են, բազմաթիւ աղքատները որ նորագնաց մարդու անհանգիստ են անում,—այնպիսի տպաւորութիւն է անում մի եւրոպացու վրա, որ համոզվում է անմիջապէս թէ մի մենդոլական ցեղին պատկանած ասիական ազգը որ 5 հարիւր տարի է գաղթած է Եւրոպայի հողի վրա, չէ կարող երբէք թողնել Մէկկայից բերած իր հին, անշարժ սովորութիւնը, նա որտեղ գնայ իւր նախնիների կոպտութիւնը սրբութեամբ կը պահի։ Շինութիւններից թէև շատերը եւրոպական ճաշակով են շինած, բայց տեղ տեղ թուրք փաշաների տունը իւր փայտերով ծածկած պատուհաններով, ամեն մի փողոցի ծայրում բարձր մինարէները (մեչիթների գմբեթը) ուր մոլլան օրը երեք անգամ կանգնած գոռում է,—այդ բոլորը քաղաքին մի առանձին տաճկական ձև է տալիս և քաղաքի միւս շքեղութիւնները ծածկում է։ Այս աշխարհահռչակ քաղաքը, ժամանակով Բիւզանդիայի զօրեղ կայսրութեան մայրաքաղաքը, ուր տեղից տարածուեցաւ Եւրոպայի մէջ քրիստոնէութիւնը, այսօր նա խոնարհած է տաճկի մոլեռանդութեանը. ժամանակով Քրիստոսի սուրբ եկեղեցիների շքեղութիւնը զարդարելիս է եղել այդ քաղաքը, այսօր նա խոնարհել է կորանին և մեչիթների բարձր մինարէների վրա փայլում է կիսալուսնեակը, իսկ եկեղեցիները գետնափոր տների պէս թագ կացած, չեն համարձակվում իւրեանց զանգակները հնչեցնել։ Ոչ առանց ցաւելու կարող է չը զարմանալ Յուստինիանոս կայսեր շինած Սոֆիայի եկեղեցու շինութեան շքեղութեան վրա, որի գմբեթի վրա կանգնեցրած է երկայն ու ձիգ մինարէտը իւր կիսալուսնեակով և այժմ կոչվում է Այա-Սոֆիայ, իսկ միւս հնութիւնները, այն բարձր կամոյները որ մինչև այսօր ամբողջութեամբ մնացած են, այն պարիսպների մէջ շինուած աշտարակները շարունակ մինչև եօթը աշտարակ կոչուած տեղը,—այդ բոլորը ի միասին տեսնողը զգում է իւր սրտի մէջ քաղաքակրթուած Եւրոպայի ամօթը, անհոգ նայել է ինչպէս այդ գեղեցիկ եւրոպական երկրի մէջ մահմեդականութիւնը կործանեց բոլոր եկեղեցիները, ջարդեց, կոտորեց ազգերը, խլեց Աւետարանի պաշտողների ստացուածը և սեփականացրեց կորանի պաշտող սերունդին նոցա բոլոր հարստութիւնները։

Քրիստոնեայ ազգերից մեծագոյն մասը Կ. Պօլսի մէջ կազմում են հայերը, որոնց հաշվում են մօտ 250 հազար, իսկ յոյները 235 հազար կան և հրէաներ մօտաւորապէս 30 հազար։ Թէև յոյները աւելի փոքր թիւ են կազմում քան թէ հայերը, բայց հայ տարրը այդտեղ այնչափ զօրեղ չէ որչափ յոյներինը, քաղաքը մտնելուն պէս նկատվում է որ կամ յունական քաղաք է, կամ տաճկական. հայերը մեծ մասամբ տաճկերէն են խօսում, և աւելի մօտիկ են տաճիկներին քան թէ ուրիշ ազգերը, իսկ յոյները թէ աւելի քաղաքակրթուած են և թէ աւելի մօտիկ են եւրոպացիների հետ։ Եղել է մի ժամանակ ինչպէս հին ամիրաների ժամանակը սուլթան Մէջիտի օրով, որ հայերը աւելի լաւ վիճակի մէջ են եղած, թէ կարողութիւնով թէ ուսումնարաններով և թէ աւելի յարգանքով կառավարութեան կողմից, բայց այսօր հայը իւր յատուկ խոնարհ բնաւորութիւնով չը կարողացաւ ընդդիմանալ կառավարութեան սանձանալուն և իւր ստացած ուժը կրկին խլել տուեց կառավարութեանը, իսկ յոյները յայտնի թշնամի տաճիկներին միշտ աւելի ատելի ու աւելի հարստահարուած լինելով աշխատում էին հեռու պահել իրանց տաճիկներից և ունեցածը աւելի խելացի գործ դնել ու չը յափշտակվել այս և այն փաշաների խոստմունքներով։ Այժմ իրանց խելքով և հանճարով իրանց ձեռք գցեցին ամբողջ հարստութիւնը և առաջին բանկիրները նրանք են այժմ։ Հայերը Կ. Պօլսում հրէաների չափ անգամ օրինաւոր դպրոցներ չունեն, այո՛ ունեն ազգային հիւանդանոց, ունեն սահմանադրութիւնը, որ յոյները չունեն, բայց յոյների ժողովը որչափ օրինաւոր, խելացի ու օգտաւէտ է ազգին, այնքան հայերի սահմանադրութիւնը վնաս է տուել ազգին, օգուտ բերելով միայն Կ. Պօլսի մի քանի մեծատուններին, իսկ խեղճ գաւառացիների բողոքները անլսելի էին մնում...

Շատերը կարծում են թէ հայը սակաւաթիւ ժողովուրդ է Պօլսի մէջ, նրանց տաճկի պէս հագնվելը, եկեղեցում անգամ քահանաների հետ տաճկերէն խօսելը, նրանց յոյներին ատելը, իսկ թուրքերին աւելի յարգելը, այնպէս իրանց մի յատուկ արժանաւորութիւն են համարում, որ չեն զանազանվում տաճիկներից և չեն կարողացել իրանց այդ սխալ ընթացքը հասկանալ, կարծելով թէ այդքան սարկանալով, ազգի յարգն և պատիւը բարձրացնում են և տէրութեան համակրութիւնը գրաւում, այն ինչ յոյները ճշմարիտ խելքով միայն աշխատում են գրաւել կառավարութեան և եւրոպացոց ուշադրութիւնը։ Ղալաթիայ ասուած թաղում առևտրականները, կերակուր եփողները, հիւրանոցների տէրերը մեծ մասամբ յոյներ են. նրանք իրանց ճարպիկութեամբ այնպէս գրաւել են եւրոպացոց ուշադրութիւնը, որ թէև եւրոպական հասարակական կարծիքը երբև դող և աւազակ հռչակած է յոյներին, բայց այնու ամենայնիւ օտարականները ստիպուած են դրանց հետ գործ ունենալ.... Զը նայելով այդ տեսակ վատ համբաւին յոյները աւելի կրթուած են և եւրոպականացած են քան միւս ազգերը։ Ամեն բանով հայը այնտեղ բացառութիւն է կազմում, հայը Կ. Պօլսում չէ կարողանում իւր բաւականի հարստութիւն ձեռք բերածը մի աւելի մեծ բանի գործադրել, նա երբ շատ հարստանում է, անմիջապէս ընկնում է ծայրայեղ շռայլութեան մէջ ու վատնում է մինչև իւր վերջին կօպէկը անբարոյական ճանապարհներով։ Այդպիսի օրինակներ շատ կան այժմ, որոնք ոչ մի ազգի մէջ այնչափ չը կայ որչափ հայերի մէջ։ Աղքատ հայը աշխատում է, հնարներ է որոնում ուղիղ ճանապարհով իւր ապրուստը հայթայթել, իսկ երբ հարստանում է, չէ կարողանում հարստութիւնը գործ գնել, նա ոչ յոյների հետ կարողանում է մրցութիւն անել և ոչ եւրոպացիների հետ։ Իսկ յոյները ընդհակառակն, երբ քաղցած են, նոցա համար իրաւէ ամօթ չը կայ, նոքա ամեն բանին պարատ են, անբարոյական ճանապարհների են ընտելացնում իրանց ընտանիքը, յոյնը ամեն բան անում է որ ապրի,—բայց երբ հարստանում է, նա ինքնասիրութիւն է ստանում, սկսում է ճշմարիտ ճանապարհներ որոնել, որով միշտ յաջողեցնում է իւր գործը։ Հարուստ յոյնը ազգասէր է, իսկ հայը աղքատ ժամանակ է ազգասէր, բայց երբ հարստանում է՝ էլ ազգը չէ ճանաչում։ Յոյնը որչափ լաւ գիտէ տաճկերէնը՝ չի խօսի. նա ամենքին յունարէն կը պատասխանի և այդպիսով շատ եւրոպացիք ստիպուած են եղել յունարէն սովորել, իսկ հայը ընդհակառակն աշխատում է միշտ ուրիշ լեզուով խօսել և իրան այլազգի ձևացնել։ Յոյները միշտ ապագայ յոյս ունեն որ Կ. Պօլիսը իրանց սեփականութիւն է և ոչ ոք չէ կարող այդ քաղաքը տիրապետել։

Ա. Ծ.

---

### ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Ստրասբուրգ. 10 ապրիլի 77.

Ոչ միայն գերմանական լրագրութիւնը, այլ և օտարը, մանաւանդ ֆրանսիականը զբաղված է մի հարցով, որ այստեղ, Գերմանիայում պատահել է այս վերջին օրերը և հասարակութեան ամեն շրջաններում խօսակցութիւնների, կասկածների, ենթադրութիւնների առարկայ է դարձել—դա իշխան Բիսմարկի վարչութեան գործերից յետ քաշվելն է։ Ֆրանսիական և Անգլիական լրագիրները մինչև անգամ մի առանձին բաժին են ստեղծել իրանց թերթերի մէջ և հեռագիրների մասում. Ի՞նչ լրագիր ձեռն առնես՝ ամեն տեղ աչքիդ կընկնի «Իշխան Բիսմարկի հրաժարականը» վերնագիրը։ Ինչ ասել կուզէ, որ գերմանական օրական մամուլը էլ աւելի մեծ նշանակութիւն է տալիս այս հարցին, չը նայելով որ մինչև այժմ ոչինչ ճշդութեամբ յայտնի չէ։ Ի՞նչ էր պատճառը, որ իշխանը, այնքան սիրած և պատուած լինելով ամբողջ ազգից, այնքան հաւատարմութիւն վայելելով ամենայն ճշմարիտ ազգասէր գերմանացիներից, այնքան

## ԹԻՖԼԻՍԻ ՀՈՎԻՆՉԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

(Մարտի 13-ից)

| | Լ. | Կ. |
|---|---|---|
| Ոսկի (սովորական) | 7 | 30 |
| Հինգ 82 տարի ս. տրց. 1000 ռ. | 1250 | — |
| Հինգ 20 կ. 72 տարի 1000 » | 1035 | — |
| Վերին Վոլգայի 5% վեկսելներ » | 167 | — |
| Ամերիկեան 265 ֆր. | 100 | — |
| Լոնդոնի վրայ 90 օրուան | 9 | 15 |
| Մարսել | 2 | |
| Ամստերդամ | 3 | |
| Բերլին | 4 | |
| Ֆրանկֆուրտ | 3 | 25 |
| Փարիզ | 3 | 88 |
| Ամսական տոկոսներ | | |
| Ռուսական թղթադրամներ 146 գր. | 100 | — |
| Ոսկեղէն իրերի վրայ 5% | 15 | |
| Ոսկեղէն իրերի վրայ (լաւագ.) | — | |
| Ամերիկայ Նորկայ (բաժ.) | — | |
| Կամսարեան | 65 | — |
| Ռուսական Նորկայ գոյլ | 120 | — |
| Ցորեն բնական (ստեղ.) | 13 | — |
| Գարի | 10 | |
| » Եփուսիր | 60 | |
| Ալիւր Շոգեաղաց | 80 | |
| » Քարաքարի | 80 | |
| Բուրդ Մեր | — | |
| Ցիւղ տաղաղ մի սրբոյ | 50 | |
| » մեղուաձի մերկոյ | 6 | — |
| Գարեջրի Բիրաներ Ս-ռիթիկայի սերկոյ | 9 | |
| » տարեկան | 6 | |
| » շաքարեղէն | 7 | 90 |
| » գիւղ տեսակ | 7 | — |
| Շաքար բրօցիսլ | 8 | — |
| Գարեղ ակցիսներ | 130 | — |
| Գարեղ ակցիսներ 125 մ. | | |
| Գարեղ ակցիսներ 200 մ. | 280 | — |
| Ներքին ապրանքներ | | |
| Գարեղ լարեր | 5 | — |
| Ալեքսանդրի ամրոցի ամրոցներ 146 գր. | 100 | — |
| Գարեղ | 9 | 15 |
| Լոնդոնի հանրային Օգնության | — | |
| Ամերիկեան հանրային 265 ֆր. | 100 | — |
| Բիրմայեան 5% վեկսելներ » | 167 | — |
| Ամերիկեան հանրային 100 » | 170 | — |
| Ամերիկեան 5% ամրագրեալներ | | |
| Ռուսական գրագրեալներ | — | |
| Ամերիկեան գրագրեալներ | — | |
| Ամերիկեան գրագրեալներ | — | |
| Ամերիկեան գրագրեալներ | — | |

## ԱՐՏԱՔԻՆ ԳՆԵՐԸ

(Մարտի 13-ին)

| | Լ. | Կ. |
|---|---|---|
| Ոսկի (սովորական) | 7 | 30 |
| Հինգ 82 տարի ս. տրց. 1000 ռ. | 1250 | — |
| Հինգ 20 կ. 72 տարի 1000 » | 1035 | — |
| Վերին Վոլգայի 5% վեկսելներ » | 167 | — |
| Ամերիկեան 265 ֆր. | 100 | — |
| Լոնդոնի հանրային Օգնության | 9 | 15 |
| Գարեղ | 2 | |
| Ամերիկեան | — | |
| Ամերիկեան Ամերիկեան | — | |
| Ամերիկեան Ամերիկեան | — | |
| Ամերիկեան Ամերիկեան | — | |
| Ամերիկեան Ամերիկեան | — | |
| Ամերիկեան Ամերիկեան | — | |

## ՀԱՅԵՐԵՆԱԳԻՐ ՎԱՃԱՌՔԻ

Ոսկերչական գործերի (Ոսկերիչներ)

Գարեղ ակցիսներ 125 մ. 130 —
Գարեղ ակցիսներ 200 մ. 280 —